



Լաբորատոր փորձեր. Պոլիմերների հատկությունները:



Փորձ 1. «Սպիրտակոսների գունավորման ռեակցիան»:

Վերցրեք չոր մաքուր փորձանոթ: Դրա մեջ լցրեք մինչև 3 մլ սպիրտակուցի լուծույթ, վրան ավելացրեք մի քանի կաթիլ խիտ ազոտական թթու: Տաքացրեք փորձանոթը սպիրտայրոցի վրա: Առաջանում է դեղին գույնի նստվածք: Սառեցրեք խառնուրդը և ավելացրեք ամոնիակ, մինչև հիմնային ռեակցիայի առաջացումը: Միջավայրը ստուգեք լակմուսի թղթով: Փորձանոթի պարունակության գունավորումը փոխվում է նարնջագույն:



Փորձ 2. «Պոլիմերների քիմիական և կենսաբանական կայունության որոշումը»:

Փորձանոթային կալանի վրա տեղադրել 1-25-ը համարակալված փորձանոթ: Դրանք բաժանել 5 մասի, և հերթով, առաջին 5-ի մեջ լցնել 10-ական մլ հեքսան, երկրորդ հնգյակի մեջ լցնել ագետոն, երրորդ հնգյակում՝ էթանոլ, չորրորդում՝ աղաթթու, հինգերորդում՝ նատրիումի հիդրօքսիդի լուծույթ: Այնուհետև յուրաքանչյուր փորձանոթի մեջ ապակյա ձողի օգնությամբ տեղավորել 1 գ բնական, կամ արհեստական պոլիմեր: 15 և 30 րոպե անց դիտել տեղի ունեցող փոփոխությունները:

Արդյունքներն արձանագրել ստորև բերված աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8.

	բամբակ	ոտտին	պոլիէթիլեն	պոլիէսթեր	պոլիամիդ
հեքսան՝ 1-5					
ագետոն՝ 6-10					
էթանոլ՝ 11-15					
աղաթթու՝ 16-20					

¹ Տես քննադիտության 10-րդ դասարանի ուսումնական նյութեր

Նատրիումի հիդրօքսիդի լուծույթ՝ 21-25					
--	--	--	--	--	--

Կատարել եզրահանգում: